Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Ապրիլ 2025
Լրատու թիւ 32

Ողջոյնի Խօսք

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

2025 թուականի յունուարի 12-ին սկսեցինք 2024-25 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի աշխատանքները:
Այս եռամսեակի ընթացքում՝ փետրուարի 16-ին տօնեցինք Վարդանանց հերոսամարտի 1574 ամեակը:
Մարտի 9-ին հիւրընկալեցինք տիկին Նունէ Սարգսեանին, նա աշակերտներին ներկայացրեց իր հեղինակած գիրքը՝ «Մրջնակեր»: Ատամնաբոյժ Ֆրեդի Թադեոսեանը աշակերտներին ներկայացրեց ատամների խնամքի մասին հետաքրքիր և անհրաժեշտ տեղեկութիւններ: Վերջում տիկին Նունէ Սարգսեանն իր հեղինակած գրքերից նուիրեց աշակերտներին:
Փետրուարի 8-ին Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները կազմակերպեցին մեր աւանդական «Ընդհանուր Գիտելիքի մրցոյթ» ձեռնարկը: Մարտի 3-ին վարժարանում նշեցինք Միջինքը, մարտի 30-ին տօնեցինք Մայրերի օրը, իսկ ապրիլի 6-ին Սուրբ Զատիկը:
2024-25 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի ընթացքում կատարուած աշխատանքների մասին Դուք կը կարդաք «Լրատու 32»-ում:
Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատասխանատուներին՝ տիկին Լենա Գիւլխանճեանին, տիկին Այիդա Եղիկեանին, տիկին Քրիստինէ Նանեանին, տիկին Անուշ Գեղամեանին և տիկին Մարինէ Մարդանեանի:
2025թ ապրիլի 6-ին աւարտուեց երկրորդ եռամսեակը:

Զատկական տօների առթիւ ապրիլի 13-ին և ապրիլի 20-ին, վարժարանի արձակուրդներ են:
2025թ ապրիլի 27-ին կը վերսկսեն վարժարանի երրորդ եռամսեակի աշխատանքները:
Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ շնորհաւորելով Սուրբ Յարութեան տօնի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւններ, անձնական երջանկութիւն:

Վարժարանի տնօրինուհի
Ռուզաննա Թաթուլեան

Ընդհանուր գիտելիքի մրցույթ – Quiz Night

Փետրվարի 8-ին վարժարանի սրահում կայացավ արդեն ավանդույթ դարձած ամենամյա ՛՛Ընդհանուր Գիտելիքների Մրցույթ՛՛-ը: Մրցույթի հարցաշարը և մրցույթի հանձնախումբը այս անգամ պատրաստել և անցկացնում էին վարժարանի նախկին շրջանավարտները, ովքեր այսօր իրենց կապը շարունակում են պահել վարժարանի հետ՝ օգնելով ուսուցիչներին կրթական համակարգում: Մրցույթը անցկացնում էր վարժարանի հոգաբարձու և ծնող Աբել Մանուկյանը: Ընտրված հարցերը բազմաժանր և հետաքրքիր էին՝ մշակույթ, գիտական, աշխարհագրական և այլն: Յուրաքանչյուր սեղան կրում էր Հայաստանի քաղաքների և շրջանների անվանումները: Մթնոլորտը շատ աշխույժ էր՝ սեղանների շուրջ հավաքվածների հետաքրքիր զրույցներով, գեղեցիկ հիշողություններով:
Ինչպես միշտ ծնողական հանձնախումբը պատրաստել էր համեղ կերակուրներով տոնական սեղան: Երեկոն անցավ շատ ուրախ, ջերմ և հաճելի մթնոլորտում: Շատ ուրախեցնող և գնահատելի էր տեսնել նախկին շրջանավարտների և ծնողների մասնակցությունը մրցույթին: Ինչ խոսք, որ նման միջոցառումները շատ խրախուսելի են և արդյունավետ և՛ դպրոցի ընդհանուր մակարդակի բարձրացման, գիտելիքների ավելացման, և՛ նաև ավելի մտերմիկ, ջերմ փոխհարաբերություններ ստեղծելու դպրոց-աշակերտ, դպրոց-ուսուցիչ, դպրոց-ծնող միջավայրում: Մեծ շնորհակալություն բոլոր կազմակերպիչներին, մասնակիցներին, հոգաբարձուներին և ծնողական հանձնախմբին:

As per tradition, our annual Quiz Night took place on February 8, at the school. The event was run by former
students of the school who are now also teachers and teaching assistants and by Mr Abel Manukian, one of our parent governors who was master of ceremonies
The evening started and finished on a high with an exciting and warm atmosphere as participants were treated to delicious dishes and desserts prepared by our amazing Parents' Committee, whose members work tirelessly to organise and execute every event.
It was very gratifying and appreciable to see the participation of former graduates and parents in the competition. Of course, such events are very encouraging and effective in creating strong bonds with our community. The winning team's members received a bottle of wine each.

Ընդհանուր գիտելիքի մրցույթ – Quiz Night

Սուրբ Վարդանանց Տօն - Vardanants

Ավանդույթ է դարձել փետրվարին տոնել Վարդանանց հերոսամարտի տարեդարձը: Այս տարի լրանում է Ավարայրի ճակատամարտի 1574 ամյակը:

Հինգերորդ դարի հայ ժողովրդի մագաղաթյա պատմության էջերից լուսարձակող ճառագայթ է Վարդանանց պատմությունը: Վարդանանց տոնը նվիրված է 451թ-ի մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտում զոհված Վարդան զորավարի և Վարդանանց 1036 նահատակների հիշատակին: Ազատագրական պայքարի այդ ակտիվ մասնակիցները հետագայում իրենց պատվավոր տեղն են գտել Հայ Առաքելական եկեղեցու սրբերի շարքում՝ ձեռք բերելով «Հայրենիքի Սուրբ Նահատակներ» հավաքական անունը, ովքեր հանուն հայրենիքի և հավատքի կռվեցին պարսկական զորքերի դեմ և նահատակվեցին:

Ավարայրի ճակատամարտը տևեց ընդամենը մէկ օր, սակայն հավատքի և ազատության համար այդ օրը սկսված պատերազմը շարունակվեց Վահանանց շարժումով, որն ի վերջո իր արդար պայքարը հասցրեց հաղթանակի ու Վարդանանց հերոսամարտից շուրջ 30 տարի անց, 484 թվականին, կնքվեց Նվարսակի դաշնագիրը, որը Պարսկաստանին պարտադրեց, ամրագրել այն իրավունքներն ու սկզբունքները, որոնց համար տեղի ունեցավ Ավարայրը:

On the 16th February as per tradition, the Feast of Vardanants was commemorated at school, marking the 1574th anniversary of the Battle of Avarayr.

The story of Vardanants is a shining beacon of light from the pages of the history of the Armenian people of the fifth century. Vardanants is dedicated to the memory of the general Vardan and the 1036 martyrs, who died in the Battle of Avarayr on May 26, 451. These active participants in the liberation struggle later found their honourable place among the saints of the Armenian Apostolic Church, acquiring the collective name of “Holy Martyrs of the Fatherland”, who fought against the Persian troops and were martyred for the sake of the Fatherland and faith.

The Battle of Avarayr lasted only one day, but the war that began that day for faith and freedom continued with the Vahanants movement, which eventually brought its just struggle to victory. About 30 years after the heroic Battle of Vardanants, in 484, the Treaty of Nvarsak was signed, which forced Persia to preserve the rights and principles for which Avarayr was fought.

The purpose of commemorating Vartanants is to educate our students in patriotism, honesty, and pride towards their homeland.

Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Սուրբ Վարդանանց Տօն - Vardanants

Ավարայրը եղել և մնում է իր ազատության և անկախության համար պայքարող հայ ժողովրդի ներշնչանքի աղբյուրը, և այն կլինի նաև ապագայում:

Փետրվարի 16-ին Գ Թահթայան Կիրակնօրյա Ազգային վարժարանում տոնեցինք Վարդանանց հերոսամարտի 1574 այակը: Հանդեսը սկսվեց երգչախմբի «Իմ Հայրենյաց հոգի Վարդան» հայրենասիրական երգի գեղեցիկ կատարումով: Այնուհետև աշակերտները ներկայացրին Վարդանանց հերոսամարտի խորհուրդը: Ցածր դասարանների աշակերտներն արտասանեցին հայրենասիրական ոտանավորներ: Վարժարանի տնօրինուհի Տիկ Ռ Թաթուլյանը եւ ուսուցչուհի Տիկ Ա Գեղամյանն աշակերտներին ներկայացրին Վարդանանց հերոսամարտի դերն ու նշանակությունը մեր պատմության ընթացքում: Շնորհակալություն մեր սիրելի ուսուցչուհիներին այդ գեղեցիկ հանդեսը կազմակերպելու համար:

The headteacher, Mrs R Tatulyan and teacher, Mrs A Geghamyan, presented to all what the heroic battle of Vardanants and the liberation struggle means to the Armenian people and its significance in our history. The school's choir sang patriotic songs about the Battle of Avarayr and the students performed and recited poems dedicated to Vardanants.

Thank you to our beloved teachers for organising that beautiful event.

Ուսուցիչների և օգնականների վերապատրաստում
Sharing Learning

Վարժարանում հաճախակի կազմակերպում ենք ուսուցիչների և օգնականների վերապատրաստումներ: Ուսուցչուհիները ներկայացնում են իրենց աշխատանքային փորձը և հաջողված դասավանդման մեթոդները: Այս ուսումնական տարում նոյեմբերի 3-ին տիկ. Անուշ Գեղամյանը, փետրվարի 9-ին տիկ Թամար Մինասյանը, մարտի 2-ին տիկ Արմինէ Սարգսյանը և մարտի 23-ին տիկ Լենա Գիւլխանճեանը ներկայացրեցին իրենց աշխատանքի ընթացքում լավագույն արդյունքներ գրանցված դասավանդման մեթոդները: Նրանք սիրով պատասխանեցին ուսուցիչների և օգնականներին հետաքրքրող հարցերին:

We frequently organise sharing best practices, lessons learned from mistakes, or insights from lived experiences between teachers at the school. This academic year, on November 3, Mrs. Anush Geghamyan, on February 9, Mrs. Tamar Minasyan, on March 2, Mrs. Armine Sargsyan, and on March 23, Mrs. Lena Kulkhanjian collaboratively exchanged with teachers and assistants, knowledge, skills, best practices and experiences as well as gladly answered questions to enhance understanding and improve outcomes

Հանդիպում մանկագիր տիկ Նունէ Սարգսեանի և ատամնաբոյժի Ֆրեդի Թադեոսեանի հետ

Մարտի 9-ին մեր վարժարանում մեր հիւրերն էին տիկ Նունէ Սարգսեանը և ատամնաբոյժ Ֆրեդի Թադեոսեանը:

Տիկին Նունէ Սարգսեանը հեղինակել է բազմաթիւ մանկական գրքեր: Նա մեր աշակերտներին ներկայացրեց իր հեղինակած «Մրջնակեր» գիրքը, որը հետաքրքիր պատմութիւն էր ատամների խնամքի անհրաժեշտութեան մասին:

Այնուհետև ատամնաբոյժ Ֆրեդի Թադեոսեանը աշակերտներին ներկայացրեց բերանի խոռոչի, ատամների կառուցվածքի և նրանց ճիշտ խնամքի մասին դասախօսութիւն:

Երեխաները մեծ ուշադրությամբ լսեցին և խոստացան, որ կհետևեն մեր բանախօսների խորհուրդներին:

Վերջում տիկին Նունէ Սարգսեանը աշակերտներին նուիրեց իր հեղինակած գրքերը:

Շնորհակալութիւն յարգելի տիկին Սարգսեանին և իր ներկայութեան, հետաքրքիր զրույցի և՛ գրքերի համար: Մեծ ուրախութեամբ աշակերտները ընդունեցին նուէրները և խոստացան, որ կկարդան:

Շնորհակալութիւն նաև ատամնաբոյժ Ֆրեդի Թադեոսեանին շատ կարևոր դասախոսութեան համար:

Նման հանդիպումները շատ կարևոր են, քանի որ նպաստում են աշակերտների գիտելիքների ավելացմանը և զարգացմանը:

On March 9, Mrs. Nune Sargsyan and dentist Fredy Tadeosyan visited our school. Mrs. Nune Sargsyan who has authored many children's books, presented her latest "Anteaters" to our students, which was an interesting imaginary story about how the anteaters lost their teeth and the importance of dental care.

Then, dentist Fredy Tadeosyan presented to the students the importance of oral health - how to look after their teeth, what foods are damaging for teeth, and their proper care.The children listened with great attention and promised that they would follow the advice of our speakers.

At the end, Mrs. Nune Sargsyan gifted the students copies of her different books. We are thankful to the esteemed Mrs. Sargsyan for her presence, interesting conversation and books. The students accepted the gifts with great joy and promised to read them.

Thank you also to dentist Fredy Tadeosyan for a very important talk. Such meetings are very important, as they enrich the development of students' knowledge.

Մայրերի Օր – Mothers'Day

Մայրերի օրը առանձնահատուկ տոն է, որը նշվում է աշխարհի տարբեր երկրներում՝ ի պատիվ մայրերի անսահման սիրո, զոհողության և նվիրումի: Այն սիրո և հոգատարության խորհրդանիշն է, և այդ օրը մարդիկ արտահայտում են իրենց երախտագիտությունը մայրերին, տատիկներին և բոլոր այն մարդկանց, ովքեր մայրական ջերմություն և խնամք են տալիս: Մայրերի օրը Գէորգ Թահթաեան ազգային վարժարանում նշվում է մեծ սիրով և ջերմությամբ: Այս տարի այն նշվեց մարտի 30-ին: Երեխաները պատրաստել էին գեղեցիկ բացիկներ և նվերներ իրենց մայրիկների համար: Մեր շատ սիրելի ծնողական հանձնախումբը համեղ կերակուրներ էր պատրաստել բոլորի համար: Բոլոր երեխաները ոգևորված էին, քանի որ այդ օրը շատ գեղեցիկ էր և հիշարժան:

Mother's Day is a special holiday that is celebrated in different countries of the world in honour of mothers' endless love, sacrifice and dedication. It is a symbol of love and care, and on that day people express their gratitude to their mothers, grandmothers and all those people who give maternal warmth and care. Mother's Day is celebrated with great love and warmth at Kevork Tahtayan Armenian Community Sunday School. This year it was celebrated on March 30. The children had prepared beautiful cards and gifts for their mothers. Our very dear Parents' Committee had prepared delicious food for everyone. All the children were excited.

Զատկական տոն և տոնավաճառ

Ապրիլ 6-ին, վարժարանում զատկական շունչ էր տիրում: Մեր սիրելի Ծնողական Հանձնախումբը կրկին կազմակերպել էր համեղ ուտեստներով և քաղցրավենիքներով Զատկական տոնավաճառ: Զատկական համեղ ուտեստների բույրը տարածվել էր ամբողջ դպրոցում, իսկ գեղեցիկ ձևավորված քաղցրավենիքները պարզապես հիասքանչ էին:
Վարժարանի փոքրիկների համար կազմակերպվել էր ավանդական «հավկիթների փնտրտուքի» խաղը: Երեխաները մեծ ոգևորությամբ փնտրում էին թաքցրած ձվերը և դրանք գտնելիս անկեղծ ուրախանում:
Շատ շնորհակալ ենք մեր սիրելի Ծնողական Հանձնախմբին, հոգաբարձուներին և բոլոր նրանց, ովքեր ամեն տարի մեծ ջանասիրությամբ կազմակերպում են տոնական միջոցառումներն՝ այնպես, որ երեխաներն ու ծնողներն անմոռանալի օր ունենան:

On April 6th, there was a different excitement in the school hall. Everyone was in a pleasant, happy mood and in spirit of Easter. Members of our Parents' Committee once again organised an Easter fair with beautifully decorated festive tables and colourful Easter decorations. The most beautiful were the colourful Easter Paskas. The aroma of delicious food spread throughout the school.
A traditional “egg hunt” game was organised for the young children of the school who looked for the hidden eggs with great enthusiasm and were sincerely happy when they found them.
We are grateful to our Parent's Committee, governors and all involved for organising such events with great diligence so that children and adults have an enjoyable day.

2024 - 2025 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 8 Սեպտ. 2024 – 15 Դեկտ. 2024 Term I 8 September 2024 – 15 December 2024	
8 Սեպտեմբեր 8 September	Վերամուտ Back to school
20 Հոկտեմբեր 20 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
27 Հոկտեմբեր 27 October	Արձակուրդ Half-Term Break
10 November	Open Day
17 Նոյեմբեր 17 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
15 Դեկտեմբեր 15 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 12 Յունուար 2025 – 17 Մարտ 2025 Term II 12 January 2025 – 17 March 2025	
19 January	Open Day
9 Փետրուար 9 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
16 Փետրուար 16 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
23 Փետրուար 23 February	Արձակուրդ Half-Term Break
30 Մարտ 30 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
6 Ապրիլ 6 April	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 27 Ապրիլ 2025 – 6 Յուլիս 2025 Term III 27 April 2025 – 6 July 2025	
4 May	Open Day
11 Մայիս 11 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
18 Մայիս 18 May	Մարզական Օր Sports' Day
25Մայիս 25May	Արձակուրդ Half-Term Break
8 June	Open Day
22 Յունիս 22 June	Դաշտահանդէս School BBQ
6 Յուլիս 6 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Անուշ Գեղամյան,Տիկ Այիդա Եղիկեան, Տիկ Քրիստինէ Նանեանին, Տիկ Մարինէ Մարդանեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան